ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ. III

21-րդ դարի մարտահրավերներ և հնարավորություններ

DEVELOPMENT OF ECONOMY AND SOCIETY:
Challenges and Opportunities of 21st Century

РАЗВИТИЕ ЭКОНОМИКИ И ОБЩЕСТВА:
вызовы и возможности 21-ого века

ՀՊՏՀ 27-ՐԴ ԳԻՏԱԺՈՂՈՎ

2017 թ., նոյեմբերի 22-24

Երևան 2018

ՀՏԴ 330:06
ԳՄԴ 65
Տ 778

Հրատարակվում է
ՀՊՏՀ գիտական խորհրդի որոշմամբ

Խմբագրական խորհրդի նախագահ՝

ԿՈՐՅՈՒՆ ԱԹՈՅԱՆ
ՀՊՏՀ ռեկտոր, տ.գ.դ., պրոֆեսոր

Խմբագրական խորհուրդ՝

ԴԻԱՆԱ ԳԱԼՈՅԱՆ - *ՀՊՏՀ միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի վարիչ, տ.գ.դ., դոցենտ*
ՍՈՒՐԵՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ - *ՀՊՏՀ բնօգտագործման տնտեսագիտության ամբիոնի վարիչ, տ.գ.դ., պրոֆեսոր*
ԱՇՈՏ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ - *ՀՊՏՀ հաշվապահական հաշվառման և աուդիտի ֆակուլտետի դեկան, տ.գ.դ., պրոֆեսոր*
ԽՈՐԵՆ ՄԽԻԹԱՐՅԱՆ - *ՀՊՏՀ գիտության և ասպիրանտուրայի բաժնի պետ, տ.գ.թ., դոցենտ*
ԱՇՈՏ ՍԱԼՆԱԶԱՐՅԱՆ - *ՀՊՏՀ ֆինանսների ամբիոնի վարիչ, տ.գ.դ., պրոֆեսոր*
ՎԱՐԴԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ - *ՀՊՏՀ տնտես. ինֆորմ. և տեղեկ. համակ. ամբիոնի վարիչ, տ.գ.դ., պրոֆեսոր*
ՅՈՒՐԻ ՍՈՒՎԱՐՅԱՆ - *ՀՊՏՀ կառավարման ամբիոնի վարիչ, ՀՀ ԳԱԱ ակադ., տ.գ.դ., պրոֆեսոր*
ԳԱԳԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ - *ՀՊՏՀ պրոռեկտոր, տ.գ.դ., պրոֆեսոր*

ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ. 21-րդ դարի մարտահրավերներ և
Տ 778 **հնարավորություններ**: ՀՊՏՀ 27-րդ գիտաժողովի նյութեր / ՀՊՏՀ: - Եր.: Տնտեսագետ, 2018, 780 էջ:

ՀՏԴ 330:06
ԳՄԴ 65

ISBN 978-9939-61-177-8

© «Տնտեսագետ» հրատարակչություն, 2018 թ.

ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔ

Գիտաժողովի հարգելի՝ մասնակիցներ,

շնորհավորում եմ բոլորիս Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի 27-րդ գիտաժողովի բացման առթիվ և ցանկանում եմ շնորհակալություն հայտնել գիտաժողովի բոլոր մասնակիցներին, ովքեր հետաքրքրություն են ցուցաբերել տնտեսության և հասարակության զարգացմանն առնչվող հրատապ հարցերի նկատմամբ:

Մեր համալսարանի տարեկան գիտաժողովները գեղեցիկ ավանդույթ են դարձել, բայց ես ուրախությամբ եմ նշում, որ դրանց կողքին այսօր առկա են մեր համալսարանի գիտական գործունեությունն արտացոլող այլ ձևաչափեր նույնպես: Հպարտությամբ եմ նշում, որ հետազոտական համալսարան դառնալու և մեր պետության տնտեսական կյանքին մասնագիտական մասնակցություն ունենալու իմ տեսլականը կամաց-կամաց կյանքի է կոչվում: Համալսարանի «Ամբերդ» հետազոտական կենտրոնի գործունեությունն այսօր տալիս է նշանակալի արդյունքներ. այստեղ ոչ միայն իրականացվում են հանրապետության տնտեսական արդիական հիմնախնդիրների վերաբերյալ հետազոտություններ, այլև կենտրոնի աշխատակիցները բուհի դասախոսական կազմի ներկայացուցիչների հետ, որպես փորձագետներ, հանդես են գալիս համապետական քննարկումներում:

Մինչ տարեկան գիտաժողովի կազմակերպումը գիտական սեմինարների ձևաչափերով հանդես եկան մեր ամբիոնները՝ շնորհանդեսներով ներկայացնելով իրենց ուսումնասիրության առանցքում առկա թեմաները: Այս ուսումնական տարվանից տրվեց գիտաուսումնական լաբորատորիաների մեկնարկը, ինչը գիտական դրամաշնորհներ, գիտաուսումնական խմբեր և գիտահետազոտական կյանքի աշխուժացմանը միտված այլ ձևաչափեր ներդնելու մեր մոտեցումների հրաշալի շարունակությունն է:

Համալսարանի տարեկան գիտաժողովը ես հատկապես կարևորում եմ ակնկալիքով, որ այն պետք է վեր հանի մեր հավաքական գիտական ներուժը, ցույց տա համալսարանում գիտական կյանքի որակական փոփոխությունը և դառնա հետագա գործունեության յուրօրինակ ուղենիշ: Այս գիտաժողովի հիմքում տնտեսության և հասարակության զարգացման հարցերն են, որոնք ի ցույց են դնում մեր դարաշրջանի մարտահրավերներն ու հնարավորությունները: Իսկապես, սրանք այնքան փոխկապակցված և կարևոր հարցեր են, որոնք չպետք է անտարբեր թողնեն տնտեսագետներին, չէ՞ որ չի կարող լինել հասարակական զարգացման որևէ մակարդակ՝ առանց կենսունակ տնտեսության:

Հուսով եմ, որ գիտաժողովը՝ իր բաժանմունքներով և կլոր սեղաններով, հնարավորություն կտա մասնագետներին ներկայացնելու իրենց մոտեցումները, բացահայտելու գիտաժողովի խորագրում արտացոլված թեման՝ իր բոլոր շերտերով և նրբություններով: Այնպես որ, արգասաբեր և աշխույժ աշխատանք եմ մաղթում Ձեզ:

Շնորհակալ եմ ուշադրության համար:

ԿՈՐՅՈՒՆ ԱԹՈՅԱՆ
ՀՊՏՀ ռեկտոր, պրոֆեսոր

После ясного и доступного введения фундаментальных понятий, не следует увлекаться их углублением, а лучше сосредоточиться на их интерпретацию и разъяснение с разных точек зрения (прежде всего экономических). На основе такой реформы следует сохранение беспорочности математических понятий, классических теорем, общепризнанных терминов, их четкое и логическое изложение.

MAXIM MURADYAN

PROBLEMS ON INTEGRATION OF HIGHER MATHEMATICS COURSE INTO ECONOMIC EDUCATION

Key words: *higher mathematics, economic university, course reform*

The research highlights that currently the Higher Mathematics course in economic universities requires a wide range of improvements both in content and in the methodology. After clear and affordable introduction of fundamental ideas, one should not be attracted to their mathematical deepening issues, but focus on their interpretation and clarification from different perspectives (primarily economic). One of the important principles laid down in the reform should be the purity of mathematical concepts, classical theorems, universally recognized terms, and their clear and logical presentation.

ՏԱԹԵՎԻԿ ՍԱՄՍՈՆՅԱՆ
Հայցորդ, ՀՊՏՀ

ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՄԱՐՔԵԹԻՆԳԱՅԻՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ

Հիմնաբառեր. *բարձրագույն կրթություն, մարքեթինգային բարեփոխումներ, կրթության որակ, կրթական ծրագրեր, միասնական կրթական համակարգ*

Հայաստանի կրթության ոլորտի զարգացման քաղաքականությունը ներկա փուլում սերտորեն կապված է միջազգային կրթական հանրության զարգացման միտումների հետ, որն էլ, իր հերթին, պայմանավորված է համաշխարհային տնտեսության զարգացման մեջ տեղի ունեցող անշրջելի վերափոխումներով: Ներկայումս իրականացվում են խորքային փոփոխություններ ՀՀ բարձրագույն կրթական համակարգում: Սա նշանակում է երկաստիճան համակարգ, անցում ուսուցման կազմակերպման կրեդիտային եղանակին՝ միաժամանակ նախաձեռնելով արմատական ծրագրային վերափոխումներ և խթանելով ուսանողների և դասախոսների անարգել ակադեմիական շարժունությունը, արմատավորել բարձրագույն կրթության որակի գնահատման և ապահովման եվրոպական չափանիշներ՝ նպաստելով բարձրագույն կրթության համակարգի և ԵԲԿՏ արտաքին

գրավչության մակարդակի բարձրացմանը և բուհերում ուսանողության դերի և ազդեցության կարևորումը կրթական և գիտական գործընթացների միահյուսման գործում:

Համաշխարհային արդի զարգացումներն իրենց անմիջական ներգործությունն են ունենում կրթական համակարգերի վրա՝ առաջադրելով տարատեսակ խնդիրներ: Գիտատեխնիկական առաջընթացի աննախադեպ արագության, բարձր տեխնոլոգիաների հարաճուն ներդրման և կիրառման հետևանքով ազգային և համաշխարհային տնտեսություններն անընդհատ վերակառուցվում են: Անընդհատ փոփոխվում է աշխատանքային միջավայրը, նորովի են կազմավորվում և վերաբաշխվում աշխատատեղերը: Որակյալ մասնագետների պահանջարկն առաջնահերթ է դարձնում աշխատանքային շուկայի պահանջներին արագորեն հարմարվելու, տեղաշարժվելու կարողությունը: ՀՀ կրթության համակարգում էական բարեփոխումները և առաջանցիկ զարգացումը դառնում են անհրաժեշտ ու անխուսափելի: Կրթական բարենպաստ միջավայրի ստեղծման անհրաժեշտությունը պահանջում է ուսուցման ավանդական մոտեցումների վերանայում և նախադպրոցական, հանրակրթական և բարձրագույն ուսումնական հաստատությունների նկատմամբ վերաբերմունքի ճշգրտում:

Երեխայի բնականոն և համակողմանի զարգացման ապահովման գործում անգնահատելի է կրթության դերը: Նախադպրոցական կրթության հիմնական խնդիրներն են երեխայի ֆիզիկական, հոգեկան, բարոյական, մտավոր զարգացման հիմքերի ստեղծումը, նրա ընդունակությունների բացահայտմանն ու բնականոն զարգացմանը նպաստելը, շրջապատի հետ շփման, սեփական կարծիքն արտահայտելու և վարքագիծը կառավարելու տարրական կարողությունների ձևավորումը, ուսուցմանը երեխային նախապատրաստելը[1]:

Վաղ տարիքում երեխաների կրթությունը տարրական կրթության որակի հիմնաքարն է. այն դրական ազդեցություն ունի տարրական դպրոց սահուն անցում կատարելու, արագ հարմարվելու և ուսման մեջ առաջընթաց ունենալու հարցերում: Քանի որ տարրական կրթության գերակայություններից մեկը կրթության որակի բարելավումն է, հետևաբար նախադպրոցական կրթության հզոր և տարածված համակարգը նախապայման է այդ նպատակին հասնելու համար: Ինչպես ամրագրված է Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրում՝ նախադպրոցական կրթության զարգացումն ուղղված է համակարգի արդիականացմանը և զարգացման նախադրյալների ստեղծմանը:

Նախադպրոցական կրթության բարեփոխումների 2008–2015 թվականների ռազմավարական ծրագիրը մշակվել է նախադպրոցական կրթության համակարգի հիմնախնդիրների լուծմանը նպաստելու նպատակով: Ինչպես նշված է Ռազմավարական ծրագրի դրույթներում՝ նախադպրոցական կրթության ոլորտում ՀՀ կառավարության հիմնական նպատակը նախադպրոցական կրթության ծառայությունների որակի և մատչելիության բարելավումն է: Առանձնակի կարևորվում է նախադպրոցական ավագ տարիքի երեխաների՝ հինգից մինչև վեց տարեկանների, տարրական կրթությանն արդյունավետ

[1] «Նախադպրոցական կրթության մասին» ՀՀ օրենք:

նախապատրաստելու հիմնախնդիրը, ինչը կապահովի երեխաների համար հավասար մեկնարկային պայմաններ տարրական դպրոցում ուսումը շարունակելու, ինչպես նաև կայուն հիմքեր կստեղծի նրանց անձնային ու սոցիալական հմտությունների զարգացման և ձևավորման համար:

Պետությունը խիստ կարևորում է կրթության բովանդակությանն առնչվող հարցերը, մասնավորապես՝ նախադպրոցական կրթության չափորոշչի ձևավորումը, դրան համապատասխան նախադպրոցական կրթության համալիր ծրագրի, ուսումնական և ուսումնաօժանդակ նյութերի ծրագրային փաթեթի մշակումը և դրանց իրականացման նկատմամբ պետական վերահսկողությունը:

Նախադպրոցական կրթության ոլորտում պետական քաղաքականության նպատակը գործող համակարգի հետագա զարգացումն է՝ հետևյալ գործողությունների ապահովմամբ.

1. Նախադպրոցական կրթության օրենսդրական դաշտի կատարելագործում:
2. Նախադպրոցական կրթության ոլորտում երեխաների ընդգրկման աճ:
3. Նախադպրոցական կրթության և խնամքի չափորոշչի մշակումը, ծրագրային սպասարկումը և որակի ապահովում:
4. Նախադպրոցական հաստատությունների կառավարման համակարգի բարելավում:
5. Ոչ պետական հաստատությունների և այլընտրանքային համայնքահեն ծառայությունների ընդլայնում:
6. Գործող նախադպրոցական հաստատությունների ցանցի ընդլայնում, հաստատությունների պայմանների բարելավում:
7. Հատուկ կարիքներով երեխաների ընդգրկում:
8. Նախադպրոցական հաստատությունների մանկավարժական կադրերի վերապատրաստման համակարգի բարելավում:
9. Վերահսկողություն նախադպրոցական կրթության ու խնամքի որակի, դրա կազմակերպման պայմանների նկատմամբ հաշվետվային համակարգի ներմուծում:
10. Միջազգային, հասարակական կազմակերպությունների և մասնավոր գործարարների ներգրավում:

Հանրակրթության գլխավոր նպատակը երեխաների, սովորողների մտավոր, հոգևոր, ֆիզիկական և սոցիալական ունակությունների համակողմանի ու ներդաշնակ զարգացումն է, նրանց պատշաճ վարքի և վարվելակերպի ձևավորումը: Հանրակրթության պետական կրթակարգում ներառված են կրթական քաղաքականության հիմնական դրույթները, դաստիարակության, ուսուցման, ուսումնառության և գնահատման ընդհանուր սկզբունքները: Հանրակրթության պետական կրթակարգի ընդունումը պայմանավորված է ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված կրթության իրավունքի իրացման ու պաշտպանության, կրթության համակարգի գործառության և զարգացման համար իրավական երաշխիքների ու մեխանիզմների ապահովման անհրաժեշտությամբ: Կրթակարգը պետության և հասարակության համար կրթության կազմակերպման գործընթացն ու

արդյունքները վերահսկելու և գնահատելու միջոց է: Կրթակարգը ամրագրում է կրթական քաղաքականության հիմնական դրույթները, միջնակարգ կրթության, նախադպրոցական և հատուկ կրթության պետական չափորոշիչների և հանրակրթական առարկաների չափորոշիչների մշակման ընդհանուր սկզբունքները, սովորողներին և ուսուցիչներին ներկայացվող հիմնական պահանջները:

Կրթակարգի հիմնական գործառույթներից առավելապես կարևորվում են.

- կրթության բնագավառում քաղաքականության միասնականության ապահովումը,
- կրթության որակի բարելավման ապահովումը,
- հանրակրթության իրականացման գործընթացում պետական ու տեղական ինքնակառավարման մարմինների,
- ուսումնական հաստատությունների, հասարակության և անհատի հարաբերությունների կանոնակարգումը,
- կրթության համապատասխանեցումը պետության և հասարակության առաջադրած խնդիրներին, անհատի պահանջմունքներին և միջազգայնորեն ընդունված չափանիշներին,
- ՀՀ-ում իրականացվող հանրակրթական հիմնական ծրագրերի հաջորդականության ապահովումը,
- մասնագիտական կրթական ծրագրերի մշակման և իրականացման հիմքերի ստեղծումը:

Հայաստանի կրթության ոլորտի զարգացման քաղաքականությունը ներկա փուլում սերտորեն կապված է միջազգային կրթական հանրության զարգացման միտումների հետ, որն էլ, իր հերթին, պայմանավորված է համաշխարհային տնտեսության զարգացման մեջ տեղի ունեցող անշրջելի վերափոխումներով: Աշխատուժի նկատմամբ ձևավորվում են նոր պահանջներ, նվազում է ցածր որակավորում ունեցող մասնագետների պահանջարկը, փոխարենն ավելանում է որակավորված մասնագետներինը, կատարվում է մասնագետների ինտենսիվ տեղաշարժ:

2005 թ. մայիսի 19-ին ՀՀ կրթության և գիտության նախարարությունը ստորագրեց Բոլոնիայի անդամ երկրների կրթության նախարարների Բերգենի կոմյունիկեն, և այսպիսով Հայաստանը պաշտոնապես միացավ Բոլոնիայի գործընթացին՝ ստանձնելով պատասխանատվություն մինչև 2010 թ. ավարտել Բոլոնիայի գործընթացի հիմնական սկզբունքների իրականացումն ըստ գործողությունների առանձին ուղղությունների և դառնալ կազմավորվող Եվրոպական բարձրագույն կրթական տարածքի (ԵԲԿՏ) մասը:[1]

Բոլոնիայի գործընթացը միջպետական նախաձեռնություն է, որի նպատակն է ստեղծել Եվրոպական բարձրագույն կրթության տարածք (ԵԲԿՏ) և նպաստել եվրոպական բարձրագույն կրթության գրավչությանն ու մրցունակությանը ողջ աշխարհում: Գործընթացն այսօր ներառում է 46 ստորագրյալ երկրներ և ընթանում է Եվրոպական միության (ԵՄ) որոշումների ընդունման ձևական շրջանակներից դուրս: Որոշումների ընդունումն այստեղ հենվում է մասնակից բոլոր երկրների համահամաձայնության վրա: Բոլո-

[1] http://www.msmsu.ru/userdata/manual/images/fac/ped_obr/Bergenskoe_kommjunike.pdf

նիայի գործընթացը մեկնարկել է 1999 թ., երբ 29 եվրոպական երկրների կրթության նախարարները հանդիպեցին Բոլոնիայում և ստորագրեցին մի հռչակագիր, որն ամրագրում էր բոլոր այն պահանջները, որոնք անհրաժեշտ էին մինչև 2010 թ. ԵԲԿՏ-ն ստեղծելու համար: Համաձայն Բոլոնիայի հիմնադիր հռչակագրի՝ ԵԲԿՏ-ն պատկերացվում է որպես մի բաց տարածք, որում ուսանողներին, շրջանավարտներին և բարձրագույն կրթության աշխատողներին հնարավորություն է ընձեռվում անարգել շարժունության և հավասարապես մատչելի բարձրորակ բարձրագույն կրթության համար: Այսպիսի բաց տարածքի անկյունաքարերն են բարձրագույն կրթության որակավորումների փոխճանաչումը, թափանցիկությունը և եվրոպական համագործակցությունը որակի ապահովման ասպարեզում: Բարձրագույն կրթության և ընդհանրապես Եվրոպայով մեկ մարդկային ռեսուրսների որակի բարելավման իր մղվածությամբ Բոլոնիայի գործընթացը կոչված է առանցքային դեր խաղալու ԵՄ Լիսաբոնյան ստրատեգիայի նպատակների ձեռքբերման մեջ, որոնք հավակնում են ապահովելու երկարատև կայուն տնտեսական աճ, ստեղծելու ավելի շատ և ավելի որակյալ աշխատատեղեր: ԵԲԿՏ-ի մյուս կարևոր առանձնահատկությունը եվրոպական բարձրագույն կրթության ընդգծված սոցիալական ուղղվածությունն է, որը ենթադրում է սովորելու և մասնագիտական ու ընդհանուր զարգացման հավասար հնարավորություններ բոլորի համար՝ հարատև կրթության համատեքստում: Ինտեգրումը ԵԲԿՏ-ին նաև դժվարին պատասխանատվություն է, քանի որ այն ենթադրում է իրականացնել խորքային փոփոխություններ ՀՀ բարձրագույն կրթական համակարգում՝ այն համապատասխանեցնելու Բոլոնիայի գործընթացի պահանջներին: Սա նշանակում է՝

- ներմուծել համընթեռնելի և համեմատելի որակավորումների երկաստիճան համակարգ,
- կատարել անցում ուսուցման կազմակերպման կրեդիտային եղանակին՝ միաժամանակ նախաձեռնելով արմատական ծրագրային վերափոխումներ և խթանելով ուսանողների և դասախոսների անարգել ակադեմիական շարժունությունը,
- արմատավորել բարձրագույն կրթության որակի գնահատման և ապահովման եվրոպական չափանիշներ՝ նպաստելով բարձրագույն կրթության համակարգի և ԵԲԿՏ արտաքին գրավչության բարձրացմանը,
- բարձրացնել բուհերում ուսանողության դերը և ազդեցությունն կրթական և գիտական գործընթացների միահյուսման գործում:

2006 թ. նոյեմբերին ՀՀ կառավարության արձանագրային որոշմամբ հաստատվել է «Բոլոնիայի գործընթացի սկզբունքերի իրագործման ժամանակացույցը», որը բուհերի համար կրեդիտային համակարգին անցման, կրթության որակի ապահովման միասնական պահանջներ է սահմանում՝նշելով դրանց կատարման վերջնական ժամկետները: 2007 թ. մշակվել է «Բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսման գործընթացի կրեդիտային համակարգով կազմակերպման օրինակելի կարգը», որը քննարկվել է ՀՀ բուհերում և հաստատվել որպես օրինակելի կարգի նախագիծ: Դրա գործադրումը կապահովի բոլոր բուհերում կրեդիտային համակարգի ներդրման միասնական գործընթաց, նույն մեթոդների կիրառմամբ: ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատությունե-

րում ստեղծվել են բարեփոխումների վարչություններ, բաժիններ, նշանակվել են պատասխանատուներ, որոնք պետք է համակարգեն բարեփոխումների աշխատանքների ողջ գործընթացը: Բոլոնիայի սկզբունքների իրագործման ուղղությամբ ՀՀ նախարարության կատարած աշխատանքները կրում են համակարգված բնույթ՝ ապահովելով ՀՀ բուհերում բարեփոխումների նկատմամաբ միասնական մոտեցումներ:

Բոլոնիայի գործընթացի նպատակն է ստեղծել Եվրոպական բարձրագույն կրթության տարածք (ԵԲԿՏ) և աջակցել բարձրագույն կրթության եվրոպական մոդելների տարածմանը ամբողջ աշխարհում: Կան մի շարք առանցքային ոլորտներ, որոնց ուղղությամբ գործընթացը հատկապես կենտրոնանում է իր նպատակին հասնելու համար: Դրանք հայտնի են նաև որպես Բոլոնիայի գործընթացի խնդիրներ:

- Ուսանողների և դասախոսների շարժունության խոչընդոտների վերացումը Եվրոպայի ներսում, ինչպես նաև դրսի ուսանողների համար դիտվում է որպես կարևորագույն գործոն ԵԲԿՏ-ի կառուցման ճանապարհին: Ընդլայնված շարժունությունն ապահովում է ուսանողների և դասախոսների կարիերայի ավելի մեծ հնարավորություններ եվրոպական աշխատաշուկայում:
- Եվրոպական բարձրագույն կրթության համար անհրաժեշտ է համարվել ներմուծել բակալավրի և մագիստրոսի 2 աստիճանների վրա հիմնված ընդհանուր համակարգ: Համակարգի ընդգրկումն այնուհետև ընդլայնվեց այս երկու աստիճաններից դուրս այնպես, որ այժմ դոկտորական մակարդակի որակավորումները դիտարկվում են որպես երրորդ աստիճան Բոլոնիայի գործընթացում: Դա հնարավորություն կտա խթանելու ավելի սերտ կապերի ձևավորումը Եվրոպական բարձրագույն կրթության տարածքի և Եվրոպական հետազոտական տարածքի (ԵՀՏ) միջև:
- Դյուրընթեռնելի և համադրելի որակավորումների համակարգի ներմուծումը կպարզեցնի որակավորումների համեմատումը ողջ Եվրոպայում, իսկ դրանով ապահովվող ճկունությունը և թափանցիկությունը ուսանողներին և դասախոսներին իրենց որակավորումների ավելի լայն ճանաչման հնարավորություն կտան՝ նպաստելով շարժունության ազատությանը ավելի ու ավելի թափանցիկ դարձող ԵԲԿՏ-ի շրջանակներում: Այս գործընթացին կօժանդակի բոլոր մասնակից երկրներում կրեդիտների համակարգի հիմնումը՝ Կրեդիտների փոխանցման եվրոպական համակարգի և Դիպլոմի հավելվածի ներմուծմամբ:
- Եվրոպայում բարձրագույն կրթության որակի բարելավումը և բարձր ստանդարտների ապահովումը միջազգային ասպարեզում ԵԲԿՏ-ն գրավիչ դարձնելու հիմնական բանալին են: Որակի ապահովման ասպարեզում եվրոպական մակարդակով համագործակցությունը և որակի հավաստման մարմինների համարժեք արտաքին փորձաքննության ապահովումը կօգնեն՝ հասնելու որակի ընդհանուր բարձր ստանդարտների ապահովմանը ամբողջ Եվրոպայում՝ դյուրացնելով նաև որակավորումների համադրելիությունը:
- Բուհերը և ուսանողները կարևոր դերակատարություն ունեն Բոլոնիայի գործընթացում, համապատասխանաբար կարևորվում է նրանց ներգրավումը տարբերակված

և հարմարունակ Եվրոպական բարձրագույն կրթական տարածքի ձևավորման գործընթացում:

- Բոլոնիայի գործընթացն իր զորակցությունն է ցուցաբերում հարատև ուսումնառության գաղափարի ներդրմանը Եվրոպայում, ինչը կարևորվում է գլոբալ աշխատաշուկայում աճող մրցակցության մարտահրավերների դիմագրավմանը և նոր կրթական տեխնոլոգիաների օգտագործմանը նպաստելու տեսանկյունից:
- Բուհերը պետք է մշակեն դասընթացներ և կրթական ծրագրեր էական և ընդհանուր եվրոպական բովանդակությամբ՝ բարձրագույն կրթության եվրոպական չափայնությունն ուժեղացնելու նպատակով: Սա ենթադրում է նաև եվրոպական բուհերի միջև համագործակցային կապերի ու համատեղ ծրագրային մշակումների խթանում, ինչպես նաև համատեղ որակավորումների հիմնում:

Բոլոնիայի, Պրագայի և Բեռլինի գագաթաժողովներում այս խնդիրները ձևակերպվեցին որպես Բոլոնիայի գործողությունների 10 ուղղություններ:

Հայաստանում Բոլոնիայի գործընթացի հիմնական դերակատարներն են ՀՀ կառավարությունը, Ակադեմիական փոխճանաչման և շարժունության ազգային տեղեկատվական կենտրոնը (ArmEnic), TEMPUS-ի ազգային գրասենյակը, Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամ-Հայաստանը և Կրթության ազգային ինստիտուտը: Բոլոնյան համաձայնագրի առանցքային կետերից է գիտելիքների կուտակման և փոխանցման եվրոպական կրեդիտային համակարգի ստեղծումը՝ որպես ուսանողների շարժունակության մեծամասշտաբ խթանող միջոց: Կրեդիտային համակարգի ստեղծման շարժառիթները ծագել են տասնամյակներ առաջ, և ոչ թե Եվրոպայում, այլ ԱՄՆ-ում:

Կրեդո բառը, որը թարգմանաբար «վստահություն» է նշանակում, վաղուց է ամրագրվել ակադեմիական գիտելիքների գնահատմանը: Նույնիսկ վաղ անցյալում, դեռևս միասնական սահմաններ չունեցող Եվրոպայում կամ ԱՄՆ-ում նկատվում էր ուսանողության ակտիվ շարժունակություն հենց ուսումնառության ընթացքում:

«Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքի հոդված 3-ի կետ 17-ում նշվում է, որ կրեդիտային համակարգը ուսումնական գործընթացի կազմակերպան, ուսումնառության արդյունքների ակադեմիական կրեդիտների միջոցով չափման, հաշվառման և փոխանցման համակարգ է: Հետևաբար կրեդիտային համակարգը գիտելիքների սոսկ գնահատման գործիք չէ, այն ավելի ընդգրկուն դերակատարում ունի կրթության ոլորտում և մի քանի նպատակ է հետապնդում.

- ուսուցման արդյունքների հաշվարկում և ուսումնառության արդյունավետության գնահատում,
- միասնական կրթական համակարգում ուսուցման արդյունքների համեմատական դաշտի ապահովում,
- ակադեմիական ճկունության ապահովում,
- կուտակված գիտելիքների փոխանցում կրթության հաջորդ աստիճան:

Այսպիսով՝ կրեդիտային համակարգը ուսումնական գործունեության կազմակերպման արդյունավետ միջոց է, որը, գիտելիքների արժևորումից ու հաշվառումից բացի,

փոխկապակցում է կրթական աստիճանները, նպաստում է ուսանողների շարժունակությունը և, ամենակարևորը, նպաստում է կրթական միասնական դաշտի ներդաշնակեցմանը և կուտակված գիտելիքների փոխճանաչմանը[1]:

ТАТЕВИК САМСОНЯАН

ОСНОВНЫЕ НАПРАВЛЕНИЯ МАРКЕТИНГОВЫХ РЕФОРМ В ОБРАЗОВАТЕЛЬНОЙ СИСТЕМЕ РА

Ключевые слова: *высшее образование, маркетинговые реформы, качество образования, образовательные программы, единая образовательная система*

На настоящем этапе политика развития сферы образования Армении тесно связана с тенденциями развития международной образовательного сообщества, которая в свою очередь обусловлена необратимыми реформами, происходящими в мировой экономике. В настоящее время осуществляются коренные изменения в высшей образовательной сфере РА. Это означает двухступенчатая система, переход на организацию кредитной формы обучения, одновременно предпринимая коренные программные реформирования и поощряя беспрепятственную академическую мобильность, укоренить европейские критерии оценки и обеспечения качества высшего образования, способствуя повышению внешней привлекательности Европейского пространства высшего образования и системы высшего образования и повысить в вузах роль студенчества и влияние процессов переплетения образовательных и научных процессов.

TATEVIK SAMSONYAN

MAIN DIRECTIONS OF MARKETING REFORMS IN THE EDUCATIONAL SYSTEM OF THE REPUBLIC OF ARMENIA

Key words: *higher education, marketing reforms, the quality of education, educational programs, a unified educational system*

At the current stage, the development policy of Armenia's education sphere is closely linked with the tendencies of the development of the international educational community, which in its turn is caused by irreversible reforms taking place in the world economy. At the present time, fundamental changes are being made in the higher educational sphere of the Republic of Armenia. This means a two-tier system, the transition to the organization of a credit form of training, while taking radical program reforms and encouraging uncomplicated academic mobility, reinforcing the European criteria for assessing and securing the quality of higher education, contributing to the external attractiveness of the European Higher Education Area and higher education system and increasing the role of higher education institutions students and the impact of the intertwining processes of educational and scientific processes.

---

[1] Ա.Ճուղուրյան, Ս. Երիցյան, 100 հարց և պատասխան բոլոնյան գործընթացի մասին, Եր., 2007, էջ 134-140: